

ՄԵՐ ՊԱՊԻ

ԳԱՐԵԶԸՑ

Թարգմանեց

Յիրուղի Կոստանեանց

Թ Ի Գ Լ Ւ Ս

Տառապան Ա. Շարամբէ, Դէկ. գ. թ. 21

1894

85

Ա-86

0121 - 01/875

1998an

30 MAY 2011



Մ

80.
Մ-66

ՄԵՐ ՊԱՌԻ

ԱՅ.

ԳԱՐԱՋՈՒՆ

1007
31882

Թարգմանեց
Տիրուհի Կոստանեանց

ԹԻԳԼԻՍ

ՁԿ. Մ. Չարաձե. || Տիպ. Մ. Շարաձ. 1894

28 JUN 2013

299



ՄԵՐ ՊԱՊԻ ԳԱԻԱՀԱՆ



ապի գաւազանը ,
որ լղկած և
մուգ գոյնով
ներկուած էր,
թեք էր ընկել
բազկաթոռի
փափուկ թե-
ւերի վերալ :

Այդ բազկաթոռի մէջ սիրում էր նստել մեր
լաւ պապը և պատմում էր մեզ զանա-
զան պատմութիւններ իւր երեխայու-
թիւնից: Մէկ երեկոյ, պապը սովորակա-

Дозв. цензур., Тифлисъ, 8 Марта 1894 г.

նից աւելի վազ գնաց պառկելու. նա ամբողջ օրն իրան վատ էր զգում:

Առաւոտուանից այդ օրը մռալլ էր, ձիւն էր գալիս. իսկ ճաշից յետոյ խիստ ցուրտը սկսել էր մարդկանց քթերն ու մատները սառեցնել և կաստեցնել. Մեր պապը շատ ծեր էր և չեր կարող ցրտին այնպէս դիմանալ, ինչպէս որ մենք. այդ պատճառով էլ, հէնց որ մութն ընկաւ նա բարի գիշեր ասելով, մեզ համբուրեց, օրհնեց և գնաց իւր սենեակը:

Պապի գնալուց յետով, մենք երկար ժամանակ խօսում էինք նորա մասին՝ «ինչպիսի բարի ու լաւ ծերուկ է. ախ, ինչպէս քաղցը ու սիրելի մարդ է»: Եւ երբ մենք պապին գովում էինք, գաւազանը կարծես փալեց ուրախութիւնից և շարժուեց ինքն իրան: Մենք ապշած նայում էինք նորա վերաբ: Քիչ յետոյ մեր գարմանքին վերջ չկար, երբ նա նստեց բազկաթոռի մէջ և իւր արծաթէ գլուխը դնելով նորա բարձը մէջքին, իսկ այն-

պէս, ինչպէս որ անում էր պապը, մեզ պատմեց այս հետաքրքիր պատմութիւնը,

«Սիրելի երեխաներ, այսպէս սկսեց գաւազանը, ձեր պապը ծեր է, շատ ծեր, 70 տարեկան է. իսկ ես նորանից տասն անգամ աւելի մեծ եմ. ես իմ ամբողջ կեսնքս չկարծէք թէ գաւազան էի: Ո՛հ, ոչ. լիշտում եմ, որ ես մի փոքրիկ կաղին էի կախուած կաղնու տերեւների մէջ: Մէկ աշնան առաւոտ սկիւռը ուրախ ու փայլուն աչքերով սկսեց թռչկոտել այն ճիւղերի վերայով, որտեղ որ ես էի: Նա ինձ պոկեց ոստից, թռաւ ճիւղից մեծ ոստի վերայ և ապա գետին: Յետոյ նա սկսեց ինձ մտիկ տալ ամեն կողմից և տարաւ մի մամուռտ տեղ. այնտեղ նա իւր թաթերով մի փոս փորեց, ինձ գրեց մէջն ու ծածկեց հողով: ՚Ն հարկ է, սկիւռը մտածում էր թէ ձմեռը որ հասնի, նա ինձ կըհանէ, կըտանի իրան տունը, որը փորուած է լինում ծառի մէջ, և այնտեղ զրօրհնէքի տօներին անուշ անուշ կուտէ իմ միջուկս:

Բայց կամ սկիւռը մոռացել էր թէ ինձ
որտեղ էր պահել, կամ թէ մէկ չար
մարդ, գուցէ և մէկ լիմար տղայ սպա-
նել էր նորան. ով գիտէ, կարելի է որ
նա սատկել էր ցըտից, մէկ խօսքով եւ
նորան էլ չտեսալ:

Եւ ալդպէս, ես պառկած էի մու-
թը փոսի մէջ և քանի գնում փոխվում
էի զարմանալի կերպով: Ես երկար ժա-
մանակ կաղին չմնացի, այլ դարձայ մէկ
փոքրիկ կտղնի ծառ: Ես իմ բարակ ճիւ-
ղերս իրանց քնքով տերևներսկ տարա-
ծում էի թէ դէպի հանդարտ քամին և
թէ դէպի ամառուայ տաք արեւը: Իսկ
երբ ձմեռը գալիս էր, խորը ձիւնով
ծածկվում էր իմ չորս կողմս. ձիւնը
պակսեցնում էր ցըտի սաստկութիւնը և
ինձ ազատում էր սառելուց: Ալդպէս
տարիներն անցան. իմ բունս աւելի բարձ-
րանում ու բարձրանում էր. ճիւղերս
լայնանում էին, իսկ արմատներս խորն
էին գնում գետնի մէջ: Երբ ես 100

տարեկան եղալ, աւելի աչքի էի լնկ-
նում իմ ամրութիւնովս, քան բարձրու-
թիւնովս. իմ հարեան բարտին ինձանից
երեք անգամ աւելի բարձր էր. բայց
երբ անտառում փոթորիկներ և խիստ
քամիներ էին լինում, ես ամուր կանգ-
նած էի մնում ինչպէս մի ժայռ. ես իմ
ճիւղերս շարժում էի միայն նորա հա-
մար, որ ցոյց տամ կատաղի քամուն, թէ
իրանից չեմ վախենում, իսկ խեղճ բար-
տին վախից գողում և թեքվում էր ալս
ու այն կողմն, ինչպէս որ մարդն է տ-
նում սաստիկ խառնակութեան ժամա-
նակ: Արդէն մի քանի հարիւր տարիներ
էր անցել այն ժամանակից, երբ անտա-
ռում իմ ծնունդս տօնում էին թռչուն-
ներն ու սկիւռները: Առաջինները քաղցը
երգում էին, իսկ վերջինները թռչոտում
էին ճիւղերիս վերայով: Գիշերներն ան-
տառում գալիքը ոռնալով թափառում
էին, իսկ աշնան վաղ առաւօտներին վա-
րագները խոնթխոնթալով պտըտվում էին

շուրջս, ուտելով իմ պառազներս, որոնք
գետին էին ընկնում խիստ քամուց: Այն
ժամանակ այդ անտառում գտնվում էին
բարձրահասակ եղջերուներ. նոցա որսալը
թագաւորներին և իշխաններին մեծ բա-
ւականութիւն էր պատճառում: Ի՞նչպէս
ողորմելի՛ էին երեսում խեղճ եղջերու-
ները. նոցա վերայ նետեր էին արձակում
և վախեցած անասունները շտապ շտապ
փախչում էին իմ մօտով, լուելով շների
հաշոցը և որսորդների ձիանների տրո-
փիւնը: Ի՞նչպէս խղճալի՛ էին այն տղա-
մարդիկ ու կանալք, որոնք կերակրվում
էին անտառալին կազնիներով ու բոյե-
րի արմատներով, նոքա իրանց երջանիկ
էին համարում, երբ կարողանում էին
գիշերը քնել իմ ոտքերիս տակ կա-
նաչ խոտի վերայ: Ա՛խ, սիրելի երեխա-
ներ, ով որ բարի չէ դէսլի թոշուններն
ու գազանները, նա երբէք չի կարող բա-
րութիւն անել իրան պէս մարդկանց...
«Ելի անցաւ հարիւր տարի. էլի ու

էլի. և վերջապէս հեռացան անտառից
գալիքն ու վարազները: Մէկ անգամ,
իմ ձիւղերս դողդողացին պատերազմի
սարսափելի ձայներից: Չեմ ուզում ձեզ
պատմել, թէ ինչ զարհուրելի՛ տեսա-
րաններ ես տեսալ. չեմ հասկանում, թէ
ինչու մարդիկ կռվում ու պատերազ-
մում են...

«Բայց ի՞նչպէս երջանիկ ու ուրախ
էին իմ ծանօթ թռչուններս. նոքա բու-
ներ էին շինում իմ ձիւղերիս վերայ և
ամբողջ ամառուան երկար, քաղցը ու տաք
օրերը նստած երգում, ու ծլվում էին իմ
տերեններիս մէջ: Ի՞նչպէս բաղդաւոր էին
ճագարներն ու նապաստակները, որոնք
խաղում էին իմ շուրջու: Ի՞նչպէս մենք բո-
լորս զուարձանում էինք արեւով ու անձ-
րեսով, պարզ ու սիրուն արշալուսով և
ոսկեգոյն վերջալուսով: Բոլորն էլ ինձ սի-
րում էին և ես էլ ամենքի բարեկամն էի:

«Ելի անցաւ մէկ դար. (Հարիւր տա-
րի): Անտառների միջով սկսեցին ճանա-

Ճանապարհները բանալ և ինձանից քիչ
հեռում մի սիրուն գիւղ շինեցին:

«Խնչպէս երջանիկ էի ես, երբ փոք-
րիկ երեխաները գալիս էին իմ ստուերիս
տակը խաղալու:

«Խնչպէս ուրախ էի ես, երբ սպառաւ
կանալք ու տղամարդիկ նայում էին իմ
բարձր և ամուր արմատիս մօտ և խօ-
սում էին իրանց ջահիլ եղած ժամանակ-
ների մասին: Խնչպէս գոհ էի ես, որ
լոգնած ճանապարհորդը փոթորկից լե-
տոյ հանգստանում էր իմ ծանր ու խիտ
ճիւղիս տակ: Եւ ինչպէս զուրեկան էր
զօղանջում գիւղական եկեղեցու զանգակը
կիւրակի օրերին:

Ես շատ էի ուրախանում, երբ տես-
նում էի որ սրառաւ ու ջահիլ հարսն ու
աղջիկ զուգուած ու զարդարուած, մի
քանիսն արեի տակով, մի քանիսն էլ
ստուերի միջով գնում էին ժամ:

«Կարծես ես նոցա հսկում էի, իսկ
նոքա ՚ի հարկէ ալդ չգիտէին: Ես նկա-

տում էի, որ շաբաթ օրերը, ճաշերից լե-
տոյ, երեխաները խաղալուց ու վազվա-
լուց աւելի զուարթացած և ուրախ ու-
րախ դնում էին ժամ և լսում էի, որ
նոյն կարմրաթշիկ ու կենդանի, փալլուն-
աչքերով երեխաները գիւղի փոքրիկ ու-
սումնարանի ամենալաւ աշակերտներն ու
աշակերտուհիներն էին: Ալդ ուսումնա-
րանի չորս կողմը բուսել էին զանազան
ծառեր և թփեր, որոնց վերալ կտրին զա-
նազանագոյն ծաղիկներ: Խնչպէս ես սի-
րում էի բարի երեխաներին, նոքա էլ ինձ
էին սիրում և իմ շուրջս հաւաքուած,
երդումէին ուրախ ուրախ երգեր և ինձ
լաւ լաւ անուներ էին տալիս:

«Ալդ լաւ երեխաներից շատերը հի-
մայ մեծացել և բազդաւոր մարդիկ են
գտուել: Նատերն էլ գեռ ջահիլ ժամանակ
գիւղից դնացել են մեծ քաղաքներ: Բայց
ես գիւղացիների խօսակցութիւնից, որոնք
ամառուան երեկոները նստում էին իմ
շուրջը, հասկացալ, որ իրանց ոգնիւ ու

լաւ կեանքով պատիւ են բերել այն
փոքրիկ գիւղին, որն ինձ մօտ էր շին-
նուած: Իսկ չար, վատ և լիմար երեխա-
ներին ես շատ անգամ ճանգռուում էի,
երբ գալիս էին իմ ճիւղերիս վերայ բարձ-
րանալու և քանդելու թուշունների ու
սկիւռների ըուները: Իմ սիրտս թէև փայ-
տից է, բայց շատ ցաւում էր, լսելով թըռ-
չունների խղճալի ձայները, երբ նոցանից
խլում էին իրանց փոքրիկ ձագուկներին:
Ես քանի՞ քանի՞ անգամ լսել եմ, որ փոք-
րիկ, չար ու թափառական տղաների մայ-
քերը տիրել և լացել են, որ իրանց ե-
րեխաներն ընդունակ են ալդպիսի վատ
գործեր անելու: Եւ որչափ ցաւալի է
լսել և իմանալ, որ ալդպիսի վատ տղա-
ներն ու աղջկները մեծանալուց յետոյ
էլ եղել են չար, անպիտան ու անազնիւ
մարդիկ. այն, չար են եղել թէ դէպի ի-
րանց ընկերներն ու բարեկամները և թէ
դէպի ամենքը: Նոքա ապրել են վատ,
գժբախտ և ոչ ոք նոցա չէ սիրել:

«Այդ ժամանակ պապի գաւաղանն
անհանգիստ կերպով շարժուեց բազկա-
թոռի մէջ. հառաչեց և նորից շարունա-
կեց իւր պատմութիւնը:

«Ա՛խ, ախ, ինչպէս զժուար էր ինձ
համար բաժանուել փոքրիկ գիւղից և
ասել նորան իմ վերջին «մնաս բարել»:
Ես մէկ մէկ տեսնում էի իմ հին ընկեր-
ներիս. մենք հինգ հարիւր տարի է, որ
իրար ճանաչում էինք. նոցա բոլորին էլ
կտրել էր փայտ կոտրողի կացինը: Ըն-
կերներիս սիրուն ճիւղերը բաժանուած
էին բուներից և նոցա ահագին արմատ-
ները տանում էին զանազան տեղեր մեծ,
ճոճուան ստլերով: Վերջապէս իմ հերթն
էլ եկաւ. ինձ կտրեցին ու գցեցին գետ-
նին. Այդ բանը շատ տիրեցրեց բարի
գիւղացիներին. չնայելով որ ես մի ծառ-
էի, բայց նոքա ինձ վերայ նայում էին
ինչպէս ընկերի ու բարեկամի վերայ:

«Զրկուելով իմ ճիւղերիցս, ես ան-
ցայ շատ մղոններ, մինչեւ որ հասայ մի

ինչ որ տեղ, և տեսալ մեծ, շատ մեծ
ջրի տարածութիւն. Ես յետով իմացալ,
որ ալդ ջրի տարածութեան անունն է
ծով։ Ինձ տարան մի մեծ բակ և գրին
իմ մի քանի հին անտառալին ընկերնե-
րիս և էլի ուրիշ անժանօթ կաղնիների
մօտ։ Նոքա սկսեցին միմեանց պատմել
դարեւոր անտառների հին և նշանաւոր
կաղնիների մասին և ամեն բան իրար
պատմում էին, ինչ որ տեսել ու լսել
էին իրանց կեանքում։ Մէկ անգամ, երբ
մենք ալդպէս խօսում էինք, մի քանի
մարդիկ եկան և սկսեցին երկար ժամա-
նակ ու դժուարութեամբ աշխատել մեզ
վերաբ։ Նոքա մեզ աաշեցին, հարթեցրին
և միմեանց այնպէս խօրամանկութեամբ
կապեցին, որ դուրս եկաւ մէկ մեծ նաւ։
Երբ նաւը շինեցին պրծան, գցեցին ջրի
երեսը։ Շատ նաւաստիներ հաւաքուեցին
նաւի պատշգամբում և սկսեցին նաւը
լցնել ապրանքներով։ Վերջապէս առա-
գաստները բաց թողին և նաւը դուրս

գալով նաւահանգստից, շարժուեց դէպի
խոր ու լախ ովկիանոսը։ Զեմ կարող
ձեզ պատմել մինչև անգամ իմ տեսածս
հրաշքների կէսը։ Ա.հագին կէտ ձկները
շատրուանի նման ջուր էին բարձրացնում
իրանց շարժուելով և էլի մտնում էին
ովկիտնոսի տակը։ Սառուցի մեծ կտորներ
լողում էին ալիքների վերայով և ա-
մեն ըոսիկ կարծես պատրաստվում
էին մեզ վերալ ընկնելսւ և խեղդելու։
Տեսնում էինք ծովի խորքերում մարջա-
նի կղզիներ, որ շինում են փոքրիկ կար-
միր որդերը. նոքա սիրով աշխատում են
հազարաւոր տարիներ։ Պատահում էին և
բարձր, ժայռոս կղզիներ, նոցա վերալ ոչ
ոք չի ապրում բացի մեծ ու փոքր թըռ-
չուններից, որոնք անդադար պտոյտներ
էին անսւմ նաւի շուրջը։

«Մենք գնացինք դէպի հեռու հիւ-
սիսը, որտեղ երբէք ձիւնը չի հալվում.
այնտեղ մենք տեսանք մեր առաջ և
մեզ վերալ հիւսիսափայլն իրան զարմա-


նալի՛ գեղեցիկ փայլով։ Մենք գնացինք և հեռու հարաւ և տեսանք այնպիսի սիրուն ու պայծառ աստղեր, որ առաջ երբէք չէինք տեսել. նոքա այնպէս էին փալլում, որ դժուար է երևակալիլ։ Մենք նաւեցինք և դէպի արեւելք ու արևմուտք և շատ փորձանքների հանդիպեցինք, բայց ամեն տեղ էլ անվտանգ մնացինք։

«Բայց ահա հասաւ և մեր վերջին նաւարկութիւնը։ Լաւ եմ յիշում ամառուան այն արև օրն, երբ նաւն իմ հայրենի ափից ճանապարհ ընկաւ դէպի հեռու տեղ, դէպի Հորնի հրուանդանը։ Այդ ճանապարհորդութեան ժամանակ ես կարողացաւ տեսնել իմ հայրենի անտառի մնացորդը, որն արևի լուսից երևում էր կանաչ ոսկեգոյն։ Իմ գարեւոր կեանքիս յիշողութիւնները պատկերացան իմ առաջ, երբ տեսայ այդ սիրուն և անմոռանալի անտառը։ Զեր պապը, սիրելի երեխաններ, այն ժամանակ

գեռ երիտասարդ էր և մեր նաւ և ապետն էր։

«Այդ առաջին նաւն էր, որը նրա հրամանի տակ էր և այդ պատճառով էլ նորա համար պարձանք էր։ Մենք արդէն Ստլանտեան Ովկիանոսի կէս ճանապարհն անցել էինք, երբ սաստիկ փոթորիկ բարձրացաւ և այնպէս պատռացցաւ առագաստներն, ու կայմը վնասոց, որ կոտրուեց կայմը և ալիքները նաւին քըշեցին դէպի ժայռը, որտեղ նա կտոր կտոր եղաւ։

«Նաւապետը և ծառալողներն, ինչքան որ կարողացան, հաւաքեցին լողացող գերանները։ Նոքա պարաններով գերաններն իրար կապեցին և մի լաստ սարքեցին. յուս ունէին գոնէ նորա վերայ մի կերպ ջրի երեսին մնալ, մինչև որ պատահէր մէկ ուրիշ նաւ և նորա նաւապետը տեսնելով մեզ դժբախտներիս, մեզ ընդունէր իրան մօտ։ Ես կազմում



Եի լաստի մէկ մասը. մենք ալիքների վերալ այս ու այն կողմն էինք ճօճ- վում, մինչև որ մեր պաշարը վերջացաւ. մենք ուտելու և խմելու էլ ոչինչ չու- նէինք:

«Ա. իս, սիրելի երեխաներ, թէ գի- տենաք, ինչպիսի մեծ դժուարութեամբ ձեր պապն աշխատում էր քաղցած ու ծարաւ նաւաստիներին յոյս տալ և մխի- թարել, մինչև որ մէկ անգամ մի նաւ երևաց:

«Լաստի ծառալողները փորձեցին կանչել, բայց նոցա ձախը դուրս չէր գալիս կոկորդներից, որովհետև չորացել էին ծարաւից: Բարեբախտաբար նաւից նկատեցին լաստը և նաւակ ուղարկեցին ուժից ընկած մարդկանց օգնութիւն հաս- ցընելու: Եւ այդպիս նոցա բոլորին էլ ըն- դունեցին և ինչ որ պէտք էր տուին: Նաւապետը, ձեր բարի պապը, կամենա- լով այդ կրած նեղութիւնների համար մէկ որ և է լիշտատակ ունենալ, իրան հետ

առաւ լաստի գերաններից մէկը և նա հէնց ինձ ընտրեց: Վերջապէս նաւը մը- տաւ Տեմզա գետը: Ինձ բերին Լօնդոն և տուին հմուտ արհեստաւորի ձեռքը: Նա ինձ շինեց մի սիրուն գաւազան. լզկեց ինձ, փայլ տուեց, պղնձէ կօշիկ հագցըրեց իմ միակ ոտքիս և գլխիս ծած- կեց արծաթէ գլխարկ: Սմեն անգամ, երբ ձեր պապը գնում էր ծովով, ես նորան հետեւում էի: Իսկ երբ նա վճռեց էլ ծովով չճանապարհորդել և բնակուեց այս գեղեցիկ տան մէջ, ես էլ նորա հետ մնացի և դառալ նորա զբօսանքի ըն- կերը:

Պապի գաւազանն իւր գլուխը դրեց բազկաթոռի թերերի վերայ, ոտքն երկա- րացը դէպի գորգը և լոեց: Կարելի է էլ բան չկար պատմելու կամ գուցէ նա քնեց...

Միւս առաւօտն, երբ մեր պապն ուրախ և առողջ եկաւ մեզ հետ նախա-

Ճաշելու, մենք նորան պատմեցինք ամեն
բան, ինչ որ լսել էինք նորա գաւազա-
նից: Եւ նա հաստատեց, որ մեր բոլոր
լսածներն ուղիղ էին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0376905

5

Նոյն թարգմանչին

1.	Յովհան Գուտտելսբերգ	— 15
2.	Դօքտօր Քէններ	— 20
3.	Մանկական թատրոն	— 1 —
4.	Իբսէնի, Նօրա	— 30
5.	Լիր Արբայ	— 5
6.	Գոյլ	— 3
7.	Թուղթ և հին դրքեր (Օստրոգորսկի)	— 5
8.	Տիրօլացի ազիկ, Օստրօգորսկու ժողովածուից: Ժշտ, Գ. Կրարբի —	5



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.